600.0174.22.06.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

22 հունիսի 2016 թվականի №174Ն
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի №308Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 6-ի «Էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվության ներկայացման կարգը հաստատելու մասին» N308Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝ էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվության ներկայացման կարգի՝

   1) 1-ին կետից հանել «, 2-13, 2-14», իսկ 2-րդ կետից՝ «, 2-13 և 2-14» թվերը.

2) 6-րդ կետում «տեղեկատվությունը» բառից հետո լրացնել «՝ բացառությամբ սույն կարգի N2 հավելվածի 2-2 ձևի,» բառերը, իսկ «էլեկտրոնային տարբերակով» բառերից հետո՝ «՝ այն ուղարկելով «Մայքրոսոֆթ Օֆիս Էքսել» (Microsoft Office Excel) ծրագրային ձևաչափով՝ e-reports@psrc.am էլեկտրոնային հասցեին» բառերը.

3) N1 հավելվածում «10 ՄՎտ» բառերը փոխարինել «30 ՄՎտ» բառերով.

4) N1 հավելվածի 7-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ պարբերությամբ.

«Տեղեկատվություն էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման լիցենզիա ունեցող անձից արտահանման և սեփական ու տնտեսական կարիքների համար գնված էլեկտրական էներգիայի և դրա դիմաց վճարումների վերաբերյալ (Հավելված N 2, Ձև 2-7, Աղյուսակ 3)».

5) N1 հավելվածի 13-րդ և 14-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

6) N2 հավելվածի 2-7, 2-8, 2-9, 2-10 և 2-11 ձևերը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի, իսկ 2-13 և 2-14 ձևերն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
22 հունիսի 2016թ.